-ՌԱՄԱ մեթոդաբանություն-

եսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների ինտեգրված և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ-ի նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«Արմինաշող» ՍՊԸ
-Սննդի արտադրություն-

Կազմակերպության մասին

Հասցե: Շահումյան փ. **40, 28/4** շենք, քաղաք Արարատ, **0602**
Հիմնական արտադրատեսակներ: տորթեր, քաղցրավենիք, հացաբուլկեղեն
Աշխատակիցների թվաքանակ՝ 126 (81 կին**)**
Հիմնական շուկա ՝Հայաստան
Հիմնադրման տարեթիվ ՝**2009**

2009թ.-ից «Արմինաշող»-ն արտադրում և առաքում է ավելի քան 60 տեսակի տորթեր, խմորեղեն և հաց: Ապրանքների լայն տեսականին թխվում և անմիջապես բաշխվում է Հայաստանի Հանրապետության մթերային խանութներում և սուպերմարկետներում: Ընկերությունը նաև ընդունում է միջոցառումների նախապատրաստման պատվերներ: Համեղ և գեղեցիկ ձևավորված տորթերը յուրաքանչյուր հարսանյաց օր կամ ծննդյան խնջույք էլ ավելի տպավորիչ և քաղցր են դարձնում: Ընկերության առաքելությունն է պահպանել բնական բաղադրիչներով արտադրանքի ամենաբարձր որակի չափանիշները՝ ապահովելով լավագույն համ: Բարձր որակը, բացառիկ համը և արտադրանքի առավելագույն անվտանգությունը «Արմինաշող» ՍՊԸ-ի արտադրած տորթերն ու հացերը տարբերող առաջատար գործոններն են: Ավելի էներգաարդյունավետ արտադրության հասնելու ցանկությամբ ընկերությունը մասնակցել է EaP GREEN (2013-2017) RECP ցուցադրական նախագծին: Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2021 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից չորս տարի անց:

Առավելություններ

- **8 (2** մասնակի**)** ՌԱՄԱ տարբերակների իրականացում
- Էլեկտրաէներգիայի սպառումը տարեկան **66,400** կՎտժ-ով **(2.6%)** նվազեցնելու հնարավորություն
- Բնական գազի սպառման կրճատում **3.8%**-ով
- Նյութերի սպառման կրճատում՝ տարեկան **17,4** տոննայով
- Տարեկան **6,9** տոննա **CO2**-ի հնարավոր կրճատում
- Ռեսուրսների և էներգաարդյունավետության բարելավման շեշտադրում

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և հայտնաբերել հետևյալ ՌԱՄԱ միջոցառումները:

ՌԱՄԱ տարբերակ 1: Տորթերի և խմորեղենի մեծաքանակ վերադարձը հնարավորություն տվեց այն օգտագործել պաքսիմատ, ինչպես նաև անասնակեր արտադրելու համար: Այսպիսով, ներդրվել է 4000 եվրո, ձեռք է բերվել տեխնիկա: Պայմանագրեր են կնքվել մսամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների հետ տարեկան 2 տոննա պակսիմատ մատակարարելու համար: Մեկ տարի պահպանման ժամկետով փաթեթավորված պակսիմատի արտադրությունը հանգեցրել է տարեկան 3800 եվրոյի հետվերադարձի:
ՌԱՄԱ տարբերակ 2: Խանութներում մուտքերի սրահների կառուցում որը կնպաստի էներգախնայողությանը (ջեռուցում և հովացում) մինչև 8-12%:
ՌԱՄԱ տարբերակ 3: Արտաքին և ներքին CFL լամպերի և շիկացած լամպերի փոխարինում արդյունավետ LED լամպերով: Պարզ մարման ժամկետ՝ մինչև 1,5-2,5 տարի:
ՌԱՄԱ տարբերակ 4: Բնական գազի կաթսայի տեղադրում ջրի շրջանառության համակարգով (խանութներում և գործարանում) տարածքի ջեռուցման և տաք ջրի կրկնօգտագործման համար (Ներդրում 2000 եվրո, պարզ մարում մինչև 4-5 տարի):
ՌԱՄԱ տարբերակ 5: 2.5 մ2 սպլիտ/անջատ արևային ջրատաքացուցիչ համակարգի տեղադրում 20 վակուումային խողովակներով և 1000 լիտրանոց տարայով, գործարանում կենցաղային և արտադրական կարիքների համար օգտագործվող տաք ջրի համար: Ներդրում 600 եվրո, տարեկան խնայողություն 350 մ3 բնական գազ կամ 105 եվրո, CO2 տարեկան կրճատում 0.7 տոննա, պարզ մարման ժամկետ՝ 5.7 տարի:
ՌԱՄԱ տարբերակ 6: 2 կՎտ հզորությամբ ՖՎ պանելների տեղադրում գործարանում (էլեկտրաէներգիայի հաշվիչով): Ներդրում 2800 եվրո, տարեկան խնայողություն 3000 կՎտժ կամ 260 եվրո (տարեկան փաստացի սպառման մինչև 100%-ը, վառելիքի փոխարկումից հետո ջեռուցման, կերակուրի և HPW-ի համար), CO2-ի տարեկան կրճատում 1,4 տոննա, պարզ մարման ժամկետ՝ 10 տարի:
Մասնակի իրականացված միջոցառումներ (իրականացումն ընթացքի մեջ է):

- Խանութներում պատուհանների և մուտքի մեծ դռների պաշտպանիչ և ջերմամեկուսիչ թաղանթների տեղադրում:
- Հացի և հրուշակեղենի արտադրությամբ զբաղվող ամենամեծ գործարանում օդափոխության համակարգի արդիականացում և օդափոխության համակարգի վերականգնող սարքի տեղադրում:

Պահպանելով ձեռքբերումները

Իրականացված հիմնական տարբերակները

Մոնիթորինգի հաշվետվության ավարտին ընկերության կողմից իրականացվել են 8 ՌԱՄԱ միջոցառումներ (2 մասնակի):

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

	Ներդրում (եվրո)	Խնայողություն (եվրո/տարի)	Եղգնման ժամկետ (տարի)
6 ՌԱՄԱ տարբերակ:	48,900	18,700	3.6

Ռեսուրսների խնայողություն

	Էներգիա (կՎտժ/տարի)	Նյութեր (տ/տարի)	CO_2 (տ/տարի)
6 ՌԱՄԱ տարբերակ:	25,400	17.4	6.9

Այլ հնարավորություններ

Շարունակաբար կիրառելով ՌԱՄԱ միջոցառումներ՝ ընկերությունը զգալիորեն գերազանցել է արտադրանքի որակը, աշխատակիցների առողջությունը, անվտանգությունը և ընդհանուր բնապահպանական ցուցանիշները: «Արմինաշող» ՍՊԸ-ն շահագրգռված է իր ընկերությունում շարունակել իրականացնել ՌԱՄԱ ընթացիկ միջոցառումները, ինչպես նաև իրականացնել հետաձգվածները, ինչպիսիք են ջերմային պատերի տեղադրումը և յուրաքանչյուր խանութում 1 կՎտ հզորությամբ ՖՎ պանելների համակարգի տեղադրումը (նույն սխեմայով, ինչ գործարանում): Ներքին մթնոլորտի պահպանման, էներգիայի սպառման համակարգերի արդիականացման և կանխատեսվող միջոցառումների իրականացման շնորհիվ ընկերությունը ն կզբաղեցնի ավելի մեծ շուկաներ, օգուտներ կբերի բիզնեսի, սոցիալական և բնապահպանական բնագավառներում: Ընկերության կողմից ՌԱՄԱ միջոցառումներ կիրառելուց հետո ձեռք բերված օգուտները ներառում են արտադրության գործընթացի օպտիմալացում, ռեսուրսների վերամշակման, էներգիայի օգտագործման նվազեցման, վերականգնվող էներգիայի առավելագույն օգտագործման համար նոր սարքավորումների տեղադրում, ինչպես նաև աշխատանքային պրակտիկայի բարելավում և ընկերության ածխածնային ոտնահետքի կրճատում:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ կողմից: Այս համատեքստում «Արմինաշող» ՍՊԸ-ն միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում»-ի և մշտադիտարկվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում՝ ստուգելու իրականացված ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին իմանալու համար այցելե՛ք www.eu4environment.org:

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2023 – ՄԱԿԱԶԿ. Բոլոր իրավունքները պաշտպանված են.
Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն
Տիկին Տատյանա Չեռնյավսկայա
ԵՄ-ն շրջակա միջավայրի համարծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
E-mail: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ:
Կովկասի ՏԲԿ. Հայաստանի ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374-115-75-148